



Կիպրոսի Մելքոնյան վարժարանի հարցը հասել է Հայաստան

2005 թ.-ին Կիպրոսում փակվել է 1926 թ.-ին հիմնադրված Մելքոնյան կրթական հաստատությունը: 2009-ին Ժնևում հավաքվեց Մելքոնյան վարժարանի հիմքի վրա 21-րդ դարի համահայկական դպրոցի հիմնման նախաձեռնող խումբը: Այս օրերին խումբը Հայաստանում է՝ քննարկելու վարժարանի վերաբացման հարցը:

Հայերը Կիպրոսում հաստատվել են դեռևս 7-րդ դարից, նրանց իրավունքները պաշտպանված են օրենսդրությամբ, և այսօր Կիպրոսում հայկական գաղութը 2-3 հազար է: Այս պարագայում չունենալ հայկական կրթահամալիր, նախաձեռնող խմբի անդամ Մեսրոպ քահանա Արամյանն արդարացի չի համարում:

«Այսօր չկան արդի շնչին համապատասխանող դպրոցներ: Աշխարհով մեկ սփռված ժողովուրդը լինելով՝ հայ ժողովուրդը չունի համահայկական կրթօջախ: Մա լուրջ մտահոգություն է, հարց է, թե հայ ժողովուրդն ի՞նչ առանցքի շուրջ պետք է հավաքվի: Մեր ազգի գոյատևման խնդիրը 21-րդ դարի բուռն զարգացումների մեջ, կրթության առանցքի շուրջ համախմբվելն է», - հայտարարեց Մեսրոպ քահանան:

Նրա տեղեկացմամբ՝ Մելքոնյան վարժարանի տեղում հիմա ժամանակավորապես գործում է հունական դպրոց, և քանի որ վարժարանի տարածքը Հայ բարեգործական ընդհանուր միությանն է պատկանում, միությունն էլ որոշում է կայացրել վարժարանը փակել և վաճառել տարածքները:

«Վարժարանի հիմքն ու ավանդները շատ բարձր են: Նախաձեռնող խումբը միավորում է գանազան գործարարների, ովքեր ցանկանում են ներդրում կատարել կրթահաստատության վերաբացման գործում: Մելքոնյան երևույթը դրոշ է, այս դրոշն այսօր պատռված է և նետված ոտքերի առաջ», - նկատեց քահանան:

Նախաձեռնող խմբի անդամ, շվեյցարաբնակ Արդեն Շելեֆյանն էլ նշեց, որ վարժարանը փակվեց աշակերտ չունենալու պատճառաբանությամբ այն դեպքում, երբ 250 աշակերտ կար փակման պահին:

«Դա դարձել է ողջ-ողջ թաղված դպրոց: Մելքոնյանների կտակում էլ մի պատգամ կա միայն, որ տարածքը որպես դպրոց օգտագործվի: Այնպես, ինչպես Ֆրանսիան չի կարող Մորբոնը վաճառել, այնպես էլ մենք չենք կարող թույլ տալ, որ Մելքոնյան վարժարանը վաճառվի: Բարեգործական միության հետ կոնֆլիկտ չկա, մենք հուսով ենք՝ համաձայնության կգանք», - իր տեսակտը հայտնեց Շելեֆյանը:

ԼՐԱՆՈՍ

20:18 • 29/03, Էդվարդ Նալբանդյանն ընդունեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին

19:34 • 29/03, Տեղի ունեցավ «Մ. Գրիգոր Նարեկացի» կենտրոնի բացման հանդիսությունը

19:32 • 29/03, Հրանուշ Հակոբյանը այցելեց Համազգային հրատարակչատուն և ցուցասրահ

19:30 • 29/03, ՀՀ սփյուռքի նախարարը այցելեց «Ազդակ» և «Վանա Չայն»

19:29 • 29/03, «Թուրքիան առաջինը թող մտածի իր անօրինական միգրանտների մասին»

18:26 • 29/03, Նախագահն ընդունել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին

18:24 • 29/03, Նոր համաձայնագիր գիտության ոլորտում

18:22 • 29/03, Հովիկ Աբրահամյանը ցավակցական ուղերձ է հղել

18:20 • 29/03, Հ. Աբրահամյանն ընդունեց Շվեդիայի խորհրդարանի հայազգի պատգամավորին

18:19 • 29/03, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության՝ ԼՂՀ այցի վերաբերյալ

Նրա խոսքերով, սփյուռքյան իրականությունը մնայուն է, չենք կարող մտածել, որ մի օր կլինի, երբ ողջ հայ ազգը կհավաքվի մի երկրի մեջ, քանի որ, ըստ Ա. Շելեֆյանի, դարձել ենք միջազգային ժողովուրդ, պետք է պահպանենք սփյուռքյան հաստատությունները, որպեսզի ուժեղ լինենք:

Արդեն նախկին վարժարանի փոխտնօրեն Կարապետ Տաքսեյանն էլ ներկայացրեց, որ վարժարանի հիմնադիր Մելքոնյանները հանրապետական դպրոցի ստեղծման գաղափար ունեին, հաստատությունն ընդունում էր Սփյուռքի տարբեր վայրերից ժամանած աշակերտների, վերջին շրջանում արդեն Հայաստանից և Սփյուռքից ժամանած աշակերտներն էին կրթվում վարժարանում:

Իսկ թե ինչպիսի՞ն կլինի վարժարանը վերաբացվելուց հետո, նախաձեռնող խմբի անդամները հավաստեցին, որ վերաբացվելու համար ֆինանսական խնդիրները լուծված են, եթե Հայ բարեգործական ընդհանուր միությունը հաճայանի չվաճառել այն, արդիականացնելու, հանրակացարանը նորոգելու, կրթական ծրագրերը թարմացնելու հարցերն առաջին հերթին կլուծվեն:

19.03.2010, 19:57

Aysor.am

Տեքստում սխալ կամ վրիպակ նկատելու դեպքում, ուղարկեք խմբագրին հաղորդագրություն՝ նշելով տվյալ սխալը, այնուհետև սեղմելով Ctrl-Enter:



ՏՎՅԱԼ ԲԱԺՆԻ ՎԵՐՋԻՆ ՆՅՈՒԹԵՐԸ

ԱՅՍՕՐ

Հայաստան, Երևան, Խորենացի 34/բ
Հեռախոս՝ 538152, էլ. փոստ՝ editor@aysor.am

2008-2009 © Բոլոր իրավունքները պաշտպանված են: Aysor.am նյութերի օգտագործումն առանց հղման արգելվում է:
Հրապարակման հեղինակի կարծիքը ոչ միշտ է համընկնում խմբագրության կարծիքի հետ:
Գովազդների բովանդակության համար պատասխանատվությունը գովազդատուներինն է:

Website by Helix

CIRCLE.AM
TOP ARMENIAN